

Հավելված N 2  
ՀՀ կառավարության 2024 թվականի  
սեպտեմբերի 15-ի N 1787-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ  
ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՎ ՄԵՏԱՏՎՅԱԼՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ՄՇԱԿՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի (այսուհետ՝ ԱՏՏԵ) տարածական տվյալների և մետատվյալների ստեղծման և մշակման հետ կապված հարաբերությունները:

2. ԱՏՏԵ-ի բազային և թեմատիկ տարածական տվյալների և դրանց մետատվյալների ստեղծումը և մշակումն իրականացվում են Կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե), պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ նաև ոլորտային լիազոր մարմիններ) կողմից:

2. ԱՏՏԵ-Ի ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ, ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ  
ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

3. ԱՏՏԵ-ի բազային տարածական տվյալների ստեղծման և մշակման աշխատանքներն իրականացվում են օրթոֆոտոհատակագծերի գրասենյակային վերծանման, թվայնացման (ակնադիտական, սեզմենտավորման, դասակարգման մեթոդներով) և համապատասխան հատկանիշային տվյալների մուտքագրման միջոցով:

4. ԱՏՏԵ-ի բազային տարածական տվյալների ստեղծման և մշակման աշխատանքներն իրականացվում են մեթոդական ուղեցույցի (տեխնիկական ձեռնարկի) հիման վրա, որը մշակում և հաստատում է կոմիտեն:

5. ԱՏՏԵ-ի թեմատիկ տարածական տվյալների ստեղծման և մշակման աշխատանքներն իրականացվում են ոլորտային լիազոր մարմինների կողմից՝ մշակված և հաստատված մեթոդական ուղեցույցների (տեխնիկական ձեռնարկի) միջոցով:

6. ԱՏՏԵ-ի բազային և թեմատիկ քարտեզագրական շերտերի յուրաքանչյուր օբյեկտ պետք է ունենա եզակի նույնականացնող ծածկագիր:

7. ԱՏՏԵ-ի բազային և թեմատիկ քարտեզագրական շերտերի օբյեկտների ծածկագրման կարգը սահմանում են ԱՏՏԵ-ի լիազոր մարմինը և համապատասխան ոլորտային լիազոր մարմինները:

8. ԱՏՏԵ-ի թեմատիկ քարտեզագրական շերտերը ստեղծվում են բազային տարածական տվյալների հիմքի վրա:

9. ԱՏՏԵ-ի բազային և թեմատիկ տարածական տվյալների քարտեզագրական շերտերը և տեղեկատվական բազաները ստեղծվում և ներդրվում են փուլերով:

10. ԱՏՏԵ-ի բազային և թեմատիկ տարածական տվյալների քարտեզագրական շերտերի և տեղեկատվական բազաների ստեղծման և ներդրման փուլերը (ժամանակացույցը) հաստատում են ԱՏՏԵ-ի լիազոր մարմինը և ոլորտային համապատասխան լիազոր մարմինները:

### 3. ԱՏՏԵ-Ի ԲԱԶԱՅԻՆ ԵՎ ԹԵՄԱՏԻԿ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՏԵՂԾՄԱՆ, ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՄՈՒՏՔԱԳՐՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

11. ԱՏՏԵ-ի բազային և թեմատիկ տարածական տվյալների ԱՏՏԵ-ի լիազոր մարմինը և համապատասխան ոլորտային լիազոր մարմիններն իրականացնում են տարածական և հատկանիշային տվյալների հավաքագրում՝ ըստ հաստատված աշխատանքային ծրագրի և տեխնիկական ձեռնարկների:

12. Անալոգային՝ թղթային քարտեզագրական նյութերի առկայության պարագայում, ԱՏՏԵ-ի լիազոր մարմինը և համապատասխան ոլորտային լիազոր մարմինների ոլորտային աշխատանքային խմբերն իրականացնում են սկանավորում՝ TIFF, JPEG թվային ձևաչափերով, ինչպես նաև տեղակայում (գեոկապակցում) համապատասխան կոորդինատային համակարգում համաձայն իրենց տեխնիկական ձեռնարկի՝ ապահովելով բնօրինակ քարտեզի մասշտաբները և ընթեռնելիությունը:

13. Օրթոֆոտոհատակագծերի և սկանավորված քարտեզագրական նյութերի հիման վրա ոլորտային աշխատանքային խմբերը թվայնացնում և ստեղծում են համապատասխան

բազային և թեմատիկ քարտեզագրական շերտերը .shp (շեյփ) և այլ աշխարհագրական տեղեկատվական համակարգերին (USC) բնորոշ ձևաչափերով՝ համաձայն իրենց տեխնիկական ձեռնարկների:

14. Օրթոֆոտոհատակագծերի և սկանավորված քարտեզագրական նյութերի վրա արտացոլված օբյեկտների արդյունավետ և օբյեկտիվ վերծանումն ու թվայնացումն իրականացվում են ակնադիտական մեթոդով՝ հիմնվելով առկա փաստացի տեղեկատվության վրա, ինչպես նաև հնարավորության դեպքում ավտոմատացված եղանակով՝ դասակարգում, սեզմենտավորում և այլն:

15. ԱՏՏԵ-ի բազային և թեմատիկ քարտեզագրական շերտերի ստեղծման ժամանակ կիրառվում են երեք հիմնական տարածական մոդելներ՝ բազմանկյուններ (polygon), բազմագծեր (polyline) և կետեր (point): Բազմանկյունները հանդիսանում են օբյեկտների թվայնացման հիմնական մոդելը, սակայն բազմագծերը և կետերը նույնպես թույլատրվում են կիրառել, եթե դրանք ավելի ճիշտ ձևեր են թվային քարտեզի առանձնահատկությունները ներկայացնելու համար:

16. Տարածական տվյալների ստեղծման, մշակման, ինչպես նաև երկրաչափական ուղղումների ընթացքում առաջացած շերտերի տոպոլոգիական սխալները՝ վերադրումները և բացերը, անհրաժեշտ է հասցնել նվազագույնի:

17. ԱՏՏԵ-ի բազային և թեմատիկ քարտեզագրական շերտերի ստեղծման և մշակման ընթացքում բոլոր տարածական օբյեկտների նկատմամբ կիրառվում են կոմպոզիցիոն մեթոդները (հիմնված բացարձակ ֆիզիկական երկրաչափության վրա): Բացառություն են կազմում այն դեպքերը, որոնք համաձայնեցված են տեխնիկական խորհրդատուի համակարգող խորհրդի կողմից և հաստատված են ոլորտային լիազոր մարմինների կողմից: Այդպիսի դեպքերից կարող են լինել կորագիծ տարածական օբյեկտները, որոնց դեպքում կարող է կիրառվել որոշակի մակարդակի կոնֆիգուրացիոն մեթոդը (հիմնված վերացական տոպոլոգիայի վրա)՝ օբյեկտի տարածական բաղադրիչն արդյունավետ ներկայացնելու նպատակով:

18. Վերծանման և թվայնացման աշխատանքներն ավարտելուց հետո, չնախատեսված

սխալները բացահայտելու նպատակով, տարածական տվյալների որակի ստուգման խումբն իրականացնում է ավարտուն աշխատանքի ստուգում և ներկայացնում հաշվետվություն:

19. Ստեղծված տարածական տվյալները, անհրաժեշտության դեպքում, ենթարկվում են կորդիինատային փոխակերպման և ըստ անհրաժեշտության երկրաչափական ճշգրտումների՝ համապատասխանեցնելու նախապես սահմանված միասնական կորդիինատային համակարգին և վարչական սահմաններին կամ համակարգող խորհրդի կողմից ներկայացված ցանկացած այլ առաջարկին:

20. Բազային և թեմատիկ քարտեզագրական շերտերի տարածական ճշգրտությունն առաջարկվում է ոլորտային տեխնիկական խորհրդատուի կողմից, քննարկվում է համակարգող խորհրդում և հաստատվում համապատասխան ոլորտային լիազոր մարմինների կողմից:

21. Թեմատիկ քարտեզագրական շերտերի միջև առաջնահերթությունն առաջարկվում է ոլորտային տեխնիկական խորհրդատուի կողմից, քննարկվում է համակարգող խորհրդում և հաստատվում համապատասխան ոլորտային լիազոր մարմինների կողմից:

22. Սահմանված թեմատիկ շերտերի միջև առաջնահերթությունն իրականացվում է հետևյալ սկզբունքներով՝

1) կոմիտեի կողմից տրամադրվող կադաստրային հողամասերի շերտին կտրվի ավելի բարձր առաջնահերթություն, քան ցանկացած այլ շերտի, եթե այլ բան նախատեսված չէ գործող օրենսդրությամբ կամ ոլորտային լիազոր մարմինների կողմից.

2) քաղաքային տարածքներին կտրվի ավելի բարձր առաջնահերթություն, ի տարբերություն գյուղական բնակավայրերի, եթե այլ բան նախատեսված չէ գործող օրենսդրությամբ կամ ոլորտային լիազոր մարմինների կողմից.

3) խոշորամասշտաբ քարտեզներում ընդգրկված շերտերին կտրվի ավելի բարձր առաջնահերթություն, քան ավելի փոքր մասշտաբի քարտեզներում ընդգրկված շերտերին, եթե այլ բան նախատեսված չէ գործող օրենսդրությամբ կամ ոլորտային լիազոր մարմինների կողմից.

4) համարժեք առաջնահերթության մեջ դասակարգված շերտերից առաջնահերթությունը տրվում է այն շերտերին, որոնք, ենթադրաբար, պարունակում են ավելի փոքր մուտքային սխալներ, կամ այն շերտերին, որոնց վրա ավելի էական ազդեցություն կունենան

երկրաչափական ճշգրտումները:

23. Բազային և թեմատիկ քարտեզագրական շերտերի յուրաքանչյուր տարածական հատկանիշի համար մուտքագրվում են մետատվյալներ, ատրիբուտային տվյալներ և համապատասխան նույնականացման ծածկագրեր՝ համաձայն ԱՏՏԵ-ի լիազոր մարմնի և ոլորտային լիազոր մարմինների կողմից մշակված տեխնիկական ձեռնարկների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետությունում ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքում բազային և թեմատիկ տարածական տվյալների ցանկը և դրանց ստանդարտացման ուղեցույցները հաստատելու մասին» N 1569-Ն որոշման, ինչպես նաև հաստատված տարածական տվյալների ազգային ստանդարտների:

4. ԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ  
ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԵՏԱՏՎՅԱԼՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ  
ՄՇԱԿՄԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

24. ԱՏՏԵ-ի տարածական տվյալների և մետատվյալների ստեղծման և մշակման համար հիմք են հանդիսանում հաստատված տարածական տվյալների ազգային ստանդարտները:

25. ԱՏՏԵ-ի մետատվյալները ստեղծվում և հրապարակվում են ազգային գեոպորտալի մաս կազմող մետատվյալների շտեմարանում (կատալոգում)՝ ինչպես անմիջապես կատալոգում համապատասխան տեղեկատվության մուտքագրման, այնպես էլ XML ձևաչափով մետատվյալների ներբեռնման միջոցով:

26. ԱՏՏԵ-ի մետատվյալների շտեմարանը ստեղծվում է մետատվյալների կանոնակարգման, միօրինակեցման, օգտագործման, ինչպես նաև նշված մետատվյալների վերաբերյալ պաշտոնական տեղեկատվության ստեղծման և տրամադրման նպատակով:

27. ԱՏՏԵ-ի մետատվյալները ստեղծվում, մշակվում ու թարմացվում են էլեկտրոնային եղանակով: Ստեղծված մետատվյալների շտեմարանը (կատալոգը) պահպանվում է կոմիտեի տվյալների բազայում՝ էլեկտրոնային տարբերակով:

28. Ազգային տարածական տվյալների մետատվյալների շտեմարանը ներառում է

բազային և թեմատիկ տարածական տվյալների մետատվյալները: Բազային տարածական տվյալների մետատվյալների ստեղծման, մշակման և թարմացման համար պատասխանատու է կոմիտեն, իսկ թեմատիկ տարածական տվյալների մետատվյալների համար՝ ոլորտային լիազոր մարմինները:

29. ԱՏՏԵ-ի տարածական տվյալների մետատվյալները ստեղծվում են առնվազն ազգային գեոպորտալում առկա բազային և թեմատիկ տարածական տվյալներին համապատասխան:

30. Մետատվյալների շտեմարանը (կատալոգը) ըստ տվյալների և ծառայությունների նկարագրության տիպերի, ներառում է մետատվյալների դաշտի տեսակի նկարագրությունը, մետատվյալների անվանումը, մետատվյալների պարտադիր լրացման նշանը, տվյալների տիպը (գրառման երկարությունը), չափման միավորը, նշում/օրինակը, մետատվյալների դաշտի լրացման վերաբերյալ բացատրությունները և մետատվյալների առանձին դաշտերի համար ընդունված արժեքների կանոնները:

31. Մետատվյալների շտեմարանում (կատալոգում) տվյալները ներկայացված են հետևյալ խմբերով՝

- 1) Վեկտորային տվյալներ.
- 2) Ռաստրային և հեռագնման տվյալներ.
- 3) Առցանց քարտեզագրական ծառայություններ:

32. Ազգային տարածական տվյալների մետատվյալների շտեմարանի (կատալոգի) վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է տվյալ պահին կոմիտեի և ոլորտային լիազոր մարմինների տվյալների բազայում առկա տարածական տվյալների մետատվյալների ցանկի հիման վրա:

33. ԱՏՏԵ-ի մետատվյալները ստեղծվում, մշակվում և թարմացվում են կոմիտեի և ոլորտային լիազոր մարմինների կողմից՝ համաձայն ձևի:

**ԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԵՏԱՏՎՅԱԼՆԵՐԻ  
ՇՏԵՄԱՐԱՆԻ (ԿԱՏԱԼՈԳ) ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԹԱՐՄԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

NN ը/կ	Մետատվյալների անվանում	Մետատվյալի պարտադիր լրացման նշան	Տվյալների տիպ (գրառման երկարություն)	Չափման միավոր	Նշում/օրինակ
<b>Վեկտորային տվյալներ</b>					
1.	Ազգային տարածական տվյալների տեսակ	Պարտադիր	Կանոն 7		Տեղագրական քարտեզ, կադաստրային քարտեզ
2.	Վարչատարածքային միավոր	Պարտադիր	Կանոն 9		Մարզ, բնակավայր
3.	Ազգային տարածական տվյալների և նյութերի անվանում	Պարտադիր	Տեքստային (500)		
4.	Տվյալների կարգավիճակ	Պարտադիր	Կանոն 21		
5.	Թարմացման ամսաթիվ	Պարտադիր	Ամսաթիվ		01.01.2020
6.	Ստեղծման ամսաթիվ	Պարտադիր	Ամսաթիվ		01.01.2020
7.	Իրավատեր	Պարտադիր	Կանոն 11		Ազգային տարածական տվյալների իրավատեր
8.	Մշակող/ստեղծող	Պարտադիր	Տեքստային		Նյութի ստեղծողը՝ Կադաստրի կոմիտե, «Գեոմատիկայի կենտրոն» ստորաբաժանում
9.	Նյութի սկզբնաղբյուր	Կամայական	Կանոն 15		Քարտեզագրական, օրթոֆոտոհատակագիծ
10.	Էլիպսոիդ	Կամայական	Կանոն 14		Կրասովսկի 1942 WGS-84 (Դարբյու Ձի Էս-84)
11.	Կոորդինատային համակարգ	Պարտադիր	Կանոն 4		ARMREF 02 (Էյ Ար Էմ Ար Ի Էֆ 02), CK-42 (Սի Քեյ-42), 1963 թվականի կոորդինատային համակարգ

12.	Բարձունքային հիմք	Կամայական	Կանոն 5		1977 թվականի Բալթյան համակարգ
13.	Քարտեզագրական պրոյեկցիա	Կամայական	Կանոն 6		Հավասարանկյուն գլանային
14.	Պետական գնման պայմանագիր (համար և ամսաթիվ, պատվիրատու)	Կամայական	Տեքստային (35)		Պետական գնման պայմանագրի համար և ամսաթիվ
15.	Ճշտության տիպ	Կամայական	Կանոն 12		Պլանային, բարձունքային, մ
16.	Ճշտություն	Պայմանական	Թվային		2, 3
17.	Տվյալների հասանելիություն	Պարտադիր	Կանոն 19		1, 2, 3
18.	Պահպանման ձևաչափ	Պարտադիր	Թղթային/էլեկտրոնային (Կանոն 1)		DXF (Դի Իքս Էֆ), SHP (Էս Էյչ Փի)
19.	Մասշտաբ	Պարտադիր	Կանոն 8		1:10 000
20.	Ամփոփ նշում	Պարտադիր	Տեքստային (2000)		Տարածական տվյալի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն
21.	Ռելիեֆի հորիզոնականների հատվածք (կտրվածք)	Կամայական	Թվային	մ	1
22.	Դասակարգիչ	Կամայական	Առկա է/առկա չէ		
23.	Օբյեկտների քանակ	Կամայական	Ամբողջ թիվ	հատ	
24.	Թարմացման կարգավիճակ	Կամայական	Կանոն 13		Մասնակի թարմացում
25.	Տվյալների թարմացման հաճախականություն	Պարտադիր	Կանոն 20		Յուրաքանչյուր ամիս, ըստ անհրաժեշտության
26.	Կազմման լեզու	Կամայական	Կանոն 16		Հայերեն, ռուսերեն, անգլերեն
27.	Անկյունների աշխարհագրական կոորդինատներ	Կամայական	Երկրաչափություն		Հայտնի տեքստային ձևաչափով (WKT) (Դարբյու Քեյ Թի) նկարագրություն կամ տվյալների շտեմարանում երկրաչափական օբյեկտի համար նախատեսված դաշտ



28.	Մետատվյալների ստեղծման ամսաթիվ	Կամայական	Ամսաթիվ		
29.	Հիմնաքաներ	Պարտադիր	Տեքստային (500)		Տարածական տվյալը բնութագրող բանալի քաներ
<b>Ռ-աստրային և հեռագնման տվյալներ</b>					
1.	Ազգային տարածական տվյալների տեսակ	Պարտադիր	Կանոն 7		Քարտեզ, օդալուսանկար
2.	Վարչատարածքային միավոր	Պարտադիր	Կանոն 9		Մարզ, համայնք
3.	Տվյալների կարգավիճակ	Պարտադիր	Կանոն 21		
4.	Ստեղծման ամսաթիվ	Պարտադիր	Ամսաթիվ		Ստեղծման ամսաթիվ, (լուսանկարահանումների ամսաթիվ)
5.	Ազգային տարածական տվյալների և նյութերի անվանում	Պարտադիր	Տեքստային (500)		
6.	Իրավատեր	Պարտադիր	Կանոն 11		Տարածական տվյալների իրավատեր
7.	Մշակող/ստեղծող	Պարտադիր	Տեքստային		Մշակող
8.	Պետական գնման պայմանագիր (համար և ամսաթիվ, պատվիրատու)	Կամայական	Տեքստային (35)		Պետական գնման պայմանագրի համար և ամսաթիվ
9.	Կոորդինատային համակարգ	Պարտադիր	Կանոն 4		
10.	Ճշտության տիպ	Կամայական	Կանոն 12		Պլանային, մ
11.	Ճշտություն	Պայմանական	Թվային		10
12.	Տվյալների հասանելիություն		Կանոն 19		
13.	Պահպանման ձևաչափ	Պարտադիր	Թղթային/էլեկտրոնային (Կանոն 1)		1, 2, 3
14.	Մասշտաբ	Պարտադիր	Կանոն 8		1:10 000
15.	Բարձունքային հիմք	Կամայական	Կանոն 5		1977 թվական Բալթյան
16.	Անկյունների աշխարհագրական կոորդինատներ	Կամայական	Երկրաչափություն		Հայտնի տեքստային ձևաչափով (WKT) (Դարբյու Քեյ Թի) նկարագրություն կամ տվյալների շտեմարանում

					երկրաչափական օբյեկտի համար նախատեսված դաշտ
17.	Տարածական լուծաչափ	Կամայական	Թվային	մ/Պիքսել	0.15
18.	Պատկերի/լուսանկարի տիպ	Կամայական	Կանոն 10		Բազմասպեկտրային, պանխրոմատիկ
19.	Անպամածություն	Կամայական	Թվային	%	Անպամածության %
20.	Ծածկույթի ամբողջականություն	Կամայական	Թվային	%	Ծածկույթի %
21.	Նիշքի (ֆայլի) ծավալ	Կամայական	Թվային	Բայթ	
22.	Մետատվյալների ստեղծման ամսաթիվ	Կամայական	Ամսաթիվ		
23.	Աշխատանքների անվանում	Պայմանական	Տեքստային (100)		Հայաստանի Հանրապետության տարածքում ազգային կոորդինատային համակարգում 1:10 000, 1:25 000, 1:50 000, 1:100 000 մասշտաբով թվային նավիգացիոն քարտեզների թարմացման աշխատանքների իրականացում
24.	Օդալուսանկարահանման (տիեզերալուսանկարահանման) հավաստագիր	Պայմանական («Տարածական տվյալների տիպ» բաժնից 6, 7, 8 կետերի ընտրության դեպքում ակտիվանում են 24-37 տողերը)	Առկա է/Առկա չէ Տեքստային (50)		Առկա է
25.	Լայնության համընկնում/վերադրում	Պայմանական	Առկա է/բացակայում է: Եթե առկա է, ակտիվանում է թվային տողը, որտեղ լրացվում է վերադրման չափը	%	60
26.	Երկայնության համընկնում/վերադրում	Պայմանական	Թվային	%	40

27.	Ծածկույթի մակերես	Պայմանական	Թվային	Քառ. կմ	0.58
28.	Ծածկույթի ամբողջականություն	Պայմանական	Թվային	%	100
29.	Շրջանակի չափ	Պայմանական	Թվային		78x54 մմ
30.	Օդատիեզերալուսանկարահանման տիպ	Պայմանական	Տեքստային (50)		Կադրային
31.	Սենսորի տիպ	Պայմանական	Տեքստային (100)		Ռեսուրս-Պ
32.	Դիրքից շեղման /off nadir անկյուն	Պայմանական	Թվային	Աստիճաններ	20
33.	Արեգակի ճառագայթի անկման անկյուն	Պայմանական	Թվային	Աստիճաններ	25
34.	Մշակման մակարդակ	Պայմանական	Կանոն 17		2A
35.	Կիզակետային հեռավորություն	Պայմանական	Թվային	մմ	850
36.	Ցանցի քայք (կետերի խտությունը)	Պայմանական	Թվային		50
37.	Լուսանկարահանման տեսակ	Պայմանական	Կանոն 18		Գծային
38.	Հիմնաբառեր	Պարտադիր	Տեքստային (500)		Տարածական տվյալը բնութագրող բանալի բառեր
39.	Ամփոփ նշում	Պարտադիր	Տեքստային (2000)		Տարածական տվյալի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն

**Առցանց քարտեզագրական ծառայություններ**

1.	Առցանց քարտեզագրական ծառայության տեսակ	Պարտադիր	Կանոն 3		
2.	Վարչատարածքային միավոր	Պարտադիր	Կանոն 9		Մարզ, համայնք
3.	Օբյեկտների տիպեր	Պարտադիր	Կանոն 2		Տրանսպորտային ցանց
4.	Ազգային տարածական տվյալների տեսակ	Պարտադիր	Կանոն 7		
5.	Անվանում	Պարտադիր	Տեքստային (256)		
6.	Առցանց ծառայության կազմի նկարագրություն	Պարտադիր	Տեքստային (4000)		
7.	Ստեղծման ամսաթիվ	Պարտադիր	Ամսաթիվ		
8.	Տվյալների թարմացման հաճախականություն	Պարտադիր	Կանոն 20	Ամիսներ/շաբաթներ	Առցանց ծառայության տարածական տվյալների թարմացում

9.	Վերջին թարմացման ամսաթիվ	Պարտադիր	Ամսաթիվ		
10.	Կոորդինատային համակարգ	Պարտադիր	Կանոն 4		ARMREF 02, (Էյ Ար Էմ Ար Ի Էֆ 02), CK-42, (Սի Քեյ-42), 1963 թվականի կոորդինատային համակարգ
11.	Քարտեզագրական պրոյեկցիա	Կամայական	Կանոն 6		Գաուս-Կրյուգերի գլանային հավասարանկյուն, Մերկատորի ունիվերսալ լայնակի նախագծում (UTM) (Յու Թի Էմ)
12.	Իրավատեր	Պարտադիր	Կանոն 11		Տարածական տվյալների կամ նյութերի իրավատեր
13.	Մշակող/ստեղծող	Պարտադիր	Տեքստային		Վեր ծառայության մշակող
14.	Օգտագործող	Կամայական	Տեքստային		Համաձայնագրեր կնքած առցանց ծառայության օգտագործողներ
15.	Միասնական ռեսուրսի տեղորոշիչի (URL) (Յու Ար Էլ) հղում	Պարտադիր	Տեքստային (500)		
16.	Տվյալների հասանելիություն	Պարտադիր	Կանոն 19		
17.	Ճշտության տիպ	Պայմանական (WMS-ի (Դաբլյու Էմ Էս) դեպքում)	Կանոն 12		Պլանային, մ
18.	Ճշտություն	Պայմանական (WMS-ի (Դաբլյու Էմ Էս) դեպքում)	Թվային		10
19.	Թայլերի պահպանման ձևաչափ	Պայմանական (WMTS-ի (Դաբլյու Էմ Թի Էս) դեպքում)	Կանոն 1		Jpg, png

20.	Թայլերի թույլատրելիություն /լուծաչափ	Պայմանական (WMTS-ի (Դաբլյու Էմ Թի Էս) դեպքում)	Թվային		DPI
21.	Անկյունների աշխարհագրական կոորդինատներ	Կամայական	Երկրաչափություն		Հայտնի տեքստային ձևաչափով (WKT) (Դաբլյու Քեյ Թի) նկարագրություն կամ տվյալների շտեմարանում երկրաչափական օբյեկտի համար նախատեսված դաշտ
22.	Մետատվյալների ստեղծման ամսաթիվ	Կամայական	Ամսաթիվ		
23.	Հիմնաբառեր	Պարտադիր	Տեքստային (500)		Տարածական տվյալը բնութագրող բանալի բառեր
24.	Ամփոփ նշում	Պարտադիր	Տեքստային (2000)		Տարածական տվյալի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն

Մետատվյալներին առնչվող նշումների անվանում/հիմնական անուն	Դաշտերի նշանակություն	Ծածկագիր
<b>Պահպանման ձևաչափ</b>	Սահմանված չէ	-1
	DXF (Դի Իքս Էֆ)	3
	TAB (Թի Էյ Բի)	4
	DGN (Դի Ջի Էն)	5
	DWG (Դի Դաբլյու Ջի)	6
	MIF/MID (Էմ Այ Էֆ/ Էմ Այ Դի)	7
	DM (Դի Էմ)	8
	SHP (Էս Էյ չ Փի)	9
	XML (Իքս Էմ Էլ)	10
	GML (Ջի Էմ Էլ)	11
	JSON (Ջեյ Էս Օ Էն)	12
	GEOJSON (Ջի Ի Օ Ջեյ Էս Օ Էն)	13
	RSW (Ար Էս Դաբլյու)	14
	PCX (Փի Սի Իքս)	15
	BMP (Բի Էմ Փի)	16
	TIFF (Թի Այ Էֆ Էֆ)	17
	CDR (Սի Դի Ար)	19
	PNG (Փի Էն Ջի)	21
	PNG8 (Փի Էն Ջի 8)	22
	JPG (Ջեյ Փի Ջի)	23
	DOC (Դի Օ Սի)	24
	XLS (Իքս Էլ Էս)	25
	RTF (Ար Թի Էֆ)	26
	CSV (Սի Էս Վի)	27
	PDF (Փի Դի Էֆ)	28
	HTML (Էյ չ Թի Էմ Էլ)	31
	GDB (Ջի Դի Բի)	33
	DBF (Դի Բի Էֆ)	34
	CDR (Սի Դի Ար)	35

*Կանոն 2*

<b>Մետատվյալներին առնչվող նշումների անվանում/հիմնական անուն</b>	<b>Դաշտերի նշանակություն</b>	<b>Ծածկագիր</b>
<b>Օբյեկտների տիպեր</b>	Սահմանված չէ	-1
	Տեղանքի ռեկիեֆ	1
	Հիդրոգրաֆիա և հիդրոտեխնիկական կառույցներ	2
	Բնակավայրեր	3
	Հողամասեր	4
	Տրանսպորտային ցանց	5
	Հողաբուսական ծածկույթ	6
	Պետական սահմաններ	7
	Վարչատարածքային միավորների սահմաններ (բնակավայր, համայնք, մարզ)	8
	Աշխարհագրական օբյեկտների անվանումներ	9
Այլ տեղեկատվություն	10	

*Կանոն 3*

<b>Մետատվյալներին առնչվող նշումների անվանում/հիմնական անուն</b>	<b>Դաշտերի նշանակություն</b>	<b>Ծածկագիր</b>
<b>Առցանց քարտեզագրական ծառայության տեսակ</b>	Սահմանված չէ	-1
	WMTS (Դաբլյու Էմ Թի Էս)	1
	WMS (Դաբլյու Էմ Էս)	2
	WFS (Դաբլյու Էֆ Էս)	3
	WPS (Դաբլյու Փի Էս)	4
	TMS (Թի Էմ Էս)	5

*Կանոն 4*

Մետատվյալներին առնչվող նշումների անվանում/հիմնական անուն	Դաշտերի նշանակություն	Ծածկագիր
<b>Կոորդինատային համակարգ</b>	Սահմանված չէ	-1
	1942 թվականի կոորդինատային համակարգ	1
	WGS-84 (Դարյու Ջի Էս-84) Կոորդինատային համակարգ	2
	ARMREF02 (Էյ Ար Էմ Ար Ի Էֆ 02) պետական կոորդինատային համակարգ	3
	Պայմանական կոորդինատային համակարգ	4
	1963 թվականի կոորդինատային համակարգ	5
	Տեղական կոորդինատային համակարգ	6

*Կանոն 5*

Մետատվյալներին առնչվող նշումների անվանում/հիմնական անուն	Դաշտերի նշանակություն	Ծածկագիր
<b>Բարձունքային հիմք</b>	Սահմանված չէ	-1
	ԱՄՆ և Կանադայի ծովերի և օվկիանոսների միջին մակարդակը (ԱՄՆ և Կանադա)	1
	1977 թվականի Բալթյան համակարգ	2



Մետատվյալներին առնչվող նշումների անվանում/հիմնական անուն	Դաշտերի նշանակություն	Ծածկագիր
<b>Քարտեզագրական պրոյեկցիա</b>	Սահմանված չէ	-1
	Գաուս-Կրյուգերի գլանային հավասարանկյուն	1
	Մերկատորի ունիվերսալ լայնակի նախագծում (UTM) (Յու Թի Էմ)	2
	Ուղիղ հավասարանկյուն կոնային քարտեզագրական պրոյեկցիա	3
	Հավասարաչափ գլանային քարտեզագրական պրոյեկցիա	4
	Լամբերտի գլանային հավասար մակերեսով քարտեզագրական պրոյեկցիա	5
	1963 թվականի կոորդինատային համակարգի հավասարանկյուն տեղագրություն	6
	Երկրագնդի վրա գլանաձև լայնություն/երկարություն	7
	Երկրագնդի վրա Միլերի կոնֆորմալ ESRI:54003 (Ի Էս Ար Այ:540003)	8
Մերկատորի ուղիղ գլանաձև EPSG:3857/3395 (Ի Փի Էս Ջի:3857/3395)	9	

Կանոն 7

Մետատվյալներին առնչվող նշումների անվանում/ հիմնական անուն	Դաշտերի նշանակություն	Ծածկագիր
Ազգային տարածական տվյալների տեսակ	Սահմանված չէ	-1
	Տեղագրական քարտեզ	1
	Թեմատիկ քարտեզ	2
	Պատմական քարտեզ	3
	Անշարժ գույքի հասցեի մասին տեղեկատվություն	4
	Կադաստրային քարտեզ	5
	Օդալուսանկարներ	6
	Արբանյակային պատկերներ	7
	Օրթոլուսանկարներ/Օրթոֆոտոհատակագծեր	8
	Աշխարհագրական տեղեկատվական համակարգ/տվյալների բազա	9

Կանոն 8

Մետատվյալներին առնչվող նշումների անվանում/հիմնական անուն	Դաշտերի նշանակություն	Ծածկագիր
Մասշտաբ	Սահմանված չէ	-1
	1:500	1
	1:1000	2
	1:2000	3
	1:5000	4
	1:10 000	5
	1:25 000	6
	1:50 000	7
	1:100 000	8
	1:200 000	9
	1:500 000	10
	1:1 000 000	11
	1:2 500 000	12
	1:5 000 000	13
Այլ	14	

**Կանոն 9**

<b>Մետատվյալներին առնչվող նշումների անվանում/հիմնական անուն</b>	<b>Դաշտերի նշանակություն</b>	<b>Ծածկագիր</b>
<b>Վարչատարածքային միավոր</b>	Սահմանված չէ	1
	Երկիր	2
	Մարզ	3
	Համայնք	4
	Բնակավայր	5
	Շրջան	6
	Ենթաշրջան	7
	Պատմական վայր	8
	Տարածքային բաժանման այլ միավոր	9

**Կանոն 10**

<b>Մետատվյալներին առնչվող նշումների անվանում/հիմնական անուն</b>	<b>Դաշտերի նշանակություն</b>	<b>Ծածկագիր</b>
<b>Պատկերի/լուսանկարի տիպ</b>	Սահմանված չէ	1
	Մոնոխրոն/պանխրոմատիկ	2
	Բազմասպեկտրային	3
	Հիպերսպեկտրային	4
	Գունավոր	5
	Դրական	6
	Բացասական	7
	Ռադարային	8
	Այլ	9

**Կանոն 11**

Մետատվյալներին առնչվող նշումների անվանում/հիմնական անուն	Դաշտերի նշանակություն	Ծածկագիր
<b>Իրավատեր</b>	Սահմանված չէ	1
	Պետական մարմին	2
	Տեղական ինքնակառավարման մարմին	3
	Այլ իրավատեր	4

**Կանոն 12**

Մետատվյալներին առնչվող նշումների անվանում/հիմնական անուն	Դաշտերի նշանակություն	Չափման միավոր	Ծածկագիր
<b>Ճշտության տիպ</b>	Քարտեզների, ատլասների, օրթոֆոտոհակատակագծերի, գծապատկերների վրա ցուցադրված տեղանքի օբյեկտների պլանային դիրքի միջին քառակուսային սխալը	Մետր	1
	Բարձրության հետ կապված քարտեզների, ատլասների, օրթոֆոտոհակատակագծերի, գծապատկերների վրա ցուցադրված տեղանքի օբյեկտների դիրքի միջին քառակուսային սխալը	Մետր	2
	Գեոիդի բարձրության միջին քառակուսային սխալը	Մետր	3
	Հատակագծում գեոդեզիական, նիվերիլացման, ծանրաչափական կետերի դիրքի Միջին քառակուսային սխալը	Մետր	4
	Բարձրության հետ կապված գեոդեզիական, նիվերիլացման, ծանրաչափական կետերի դիրքի միջին քառակուսային սխալը	Մետր	5

	Ձգողականության անկանոնության միջին քառակուսային սխալը	մգալ = (1 գալոն = 1 սմ/վրկ 2)	6
--	---	-------------------------------	---

**Կանոն 13**

Մետատվյալներին առնչվող նշումների անվանում/հիմնական անուն	Դաշտերի նշանակություն	Ծածկագիր
<b>Թարմացման կարգավիճակ</b>	Սահմանված չէ	1
	Թարմացվում է	2
	Թարմացում չի իրականացվել	3
	Մասնակի թարմացում	4

**Կանոն 14**

Մետատվյալներին առնչվող նշումների անվանում/հիմնական անուն	Դաշտերի նշանակություն	Ծածկագիր
<b>Էլիպսոիդ</b>	Սահմանված չէ	-1
	1942 թվական Կրասովսկի	1
	1976 թվական (WGS-76) (Դարբյու Ջի Էս-76) միջազգային	2
	1909 թվական Հեյֆորդ	3
	1984 թվական (WGS-84) (Դարբյու Ջի Էս-84) միջազգային	4
	GRS80	5

Կանոն 15

Մետատվյալներին առնչվող նշումների անվանում/ հիմնական անուն	Դաշտերի նշանակություն	Ծածկագիր
Նյութի սկզբնաղբյուր	Սահմանված չէ	-1
	Քարտեզագրական	1
	Արբանյակային պատկերներ	2
	Օդալուսանկարներ	3
	Ֆոտոգրամետրական	4
	Դաշտային նյութեր	5
	Թվային ֆոտոհատակագիծ	6
	Օրթոլուսանկարներ/Օրթոֆոտոհատակագծեր	7
	Ընդհանրացման (գեներալիզացման)	8

Կանոն 16

Մետատվյալներին առնչվող նշումների անվանում/հիմնական անուն	Դաշտերի նշանակություն	Ծածկագիր
Լեզու	Սահմանված չէ	-1
	Հայերեն	1
	Անգլերեն	2
	Ռուսերեն	3
	Իսպաներեն	4
	Ճապոներեն	5
	Ֆրանսերեն	6
	Գերմաներեն	7
	Արաբերեն	8
	Իտալերեն	9
	Թուրքերեն	10
	Պարսկերեն	11
	այլ	12

Մետատվյալներին առնչվող նշումների անվանում/հիմնական անուն	Դաշտերի նշանակություն	Ծածկագիր
<b>Մշակման մակարդակ</b>	Սահմանված չէ	-1
	1A (1 Էյ) - ռադիոմետրիկ և երկրաչափական ուղղում, ռացիոնալ գործակիցներով բազմանդամի առկայություն	1
	1A1 (1 Էյ 1) - ռադիոմետրիկ և երկրաչափական ուղղում, ռացիոնալ գործակիցներով բազմանդամի առկայություն, գույների սինթեզ	2
	2A (2 Էյ) - ռադիոմետրիկ և երկրաչափական ուղղում, ռացիոնալ գործակիցներով բազմանդամի առկայություն, վերափոխում ըստ նորմատիվների ավտոմատացված համակարգի	3
	2B (2 Բի) - ռադիոմետրիկ և երկրաչափական ուղղում, օրթոռեկտիֆիկացում աջակցող տվյալների հիման վրա	4

Մետատվյալներին առնչվող նշումների անվանում/հիմնական անուն	Դաշտերի նշանակություն	Ծածկագիր
<b>Լուսանկարահանման տեսակ</b>	Սահմանված չէ	-1
	Օբյեկտային	1
	Գծային/երթուղային	2
	Տարածական/մակերեսային	3

*Կանոն 19*

<b>Մետատվյալներին առնչվող նշումների անվանում/հիմնական անուն</b>	<b>Դաշտերի նշանակություն</b>	<b>Ծածկագիր</b>
<b>Տվյալների հասանելիություն</b>	Սահմանված չէ	-1
	Բաց հրապարակման համար	1
	Սահմանափակ հասանելիություն	2
	Գաղտնի	3
	Այլ 4	

*Կանոն 20*

<b>Մետատվյալներին առնչվող նշումների անվանում/հիմնական անուն</b>	<b>Դաշտերի նշանակություն</b>	<b>Ծածկագիր</b>
<b>Տվյալների թարմացման հաճախականությունը</b>	Սահմանված չէ	-1
	Մշտապես	1
	Յուրաքանչյուր օր	2
	Յուրաքանչյուր շաբաթ	3
	Երկու շաբաթը մեկ	4
	Յուրաքանչյուր ամիս	5
	Եռամսյակային կտրվածքով	6
	Տարին երկու անգամ	7
	Յուրաքանչյուր տարի	8
	Ըստ անհրաժեշտության	9
	Անկանոն	10
	Նախատեսված չէ	11
Անհայտ	12	



Մետատվյալներին առնչվող նշումների անվանում/հիմնական անուն	Դաշտերի նշանակություն	Ծածկագիր
<b>Տվյալների կարգավիճակ</b>	Սահմանված չէ	-1
	Ավարտված	1
	Պատմական արխիվ	2
	Հին	3
	Մշտապես թարմացվող	4
	Նախատեսված է ստեղծել/ թարմացնել	5
	Պահանջվող/Անհրաժեշտ	6
	Ստեղծվող/թարմացվող	7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ